ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/182 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Հայր և որդի Գյոդակյաններ ՍՊԸ	Նստարաններ: Մետաղական հիմնակմախքով և փայտյա նստատեղերով նստարանը պետք է պատրաստված լինի առնվազն 2000×900մմ չափսերի: Մետաղական հիմնակմախքը պետք է պատրաստված լինի քառակուսի կտրվածքով խողովակից /40×40×3մմ/, նստարանի կողամասերում եռակցումով /եռակցվող մասերը հղկել հղկաքարով/: Մետաղական կողամասերի բարձրությունը պետք է լինի առնվազն 630մմ: Մետաղական կողամասերի ոտքերի ստորին մասում պետք է եռակցված լինի առնվազն 3մմ հաստությամբ, առնվազն 70×70մմ չափսերի 4 մետաղական թիթեղներ, յուրաքանչյուրի վրա 4 անցքեր, հարթակին /հատակին/ ամրացնելու համար: Նստարանի անմիջապես նստատեղի տակ՝ փայտյա մասերի տակ, առջևում և ետնամասում պետք է 2 մետաղական կողամասերին եռկցված լինեն 2 հատ առնվազն 40×40մմ չափսերի քառակուսի կտրվածքով խողովակ, մետաղի հաստությունն առնվազն 2մմ, իսկ վերևի մասը միացված լինի 40×40×4 քառակուսի կտրվածքով խողովակով: Մետաղական 2 կողամասերին՝ նստատեղի փայտերի ամրացման համար պետք է եռակցված լինեն պողպատյա թերթով՝ առնվազն 40×4մմ առնվազն 460մմ երկարության, իսկ հենակի փայտերի ամրացման համար՝ պողպատե թերթով առնվազն 40×4մմ առնվազն 300մմ երկարության: Նստարանների մեջտեղում՝ նստատեղի փայտյա մասերի տակ և հենակի փայտյա մասերի տակ տեղադրել

		առնվազն 40×4մմ հաստությամբ մետաղաթերթ, իսկ փայտյա մասերի՝ հեղյուսով և մանեկով ամրացված նստարանի հենակին /4 հատ/ և նստատեղին /6 հատ/ պետք է 2 մետաղական կողամասերին հեղյուսով և մանեկով ամրացված լինեն առնվազն 1900×60×40մմ չափսերի չորացրած հաճարի հղկված փայտյա մասեր՝ նստատեղի մասերում եզրերը կլորացված: Մետաղական մասերը պետք է լինեն փոշեներկված /գույնը ընտրել պատվիրատուի պատվերով/: Փայտյա մասերը պետք է լաքապատված լինեն հաճարի գույնը մգեցնող լաքով: Թիկնակի վերին փայտյա մասի վրա, լազերային փորագրությամբ, պետք է փորագրված լինի «ԴԱՎԹԱՇԵՆ»: Նստարանների տեղադրումը իրականացնել պատվիրատուի ներկայացված հասցեներով: Նստարանի մետաղական հիմնակմախքի կորացումները պետք է պատրաստված լինի պատվիրատուի կողմից ներկայացված լուսանկարին համաձայն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Айр ев ворди Гедакяннер в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊԶՔ-26/182 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		